

Գյուղատնտեսական կենդանիների ոչ վարակիչ հիվանդություններ

Ոչ վարակիչ հիվանդությունները լայն տարածում ունեն մեր հանրապետությունում և մեծ տնտեսական վնասներ են հասցնում անասնապահությամբ զբաղվող ֆերմերներին և ողջ անասնապահությանը: Ոչ վարակիչ հիվանդությունները հարուցիչներ չունեն, այլ ունեն առաջացման բազմաթիվ այլ պատճառներ: Այսինքն՝ այս հիվանդությունները վարակիչ բնույթ չունեն և չեն տարածվում: Բայց ընդամենը մեկ պատճառից ողջ նախիրը կարող է հիվանդանալ, օրինակ՝ թունավոր կերից:

Ոչ վարակիչ հիվանդություններից այս ուղեցույցում ներկայացված է այն հիմնական հիվանդությունները (թունավորումներ, փքանք, կերակրափողի խցանում, տրավմատիկ ռետիկուլիտ և ռետիկուլոպերիկարդիդ, վերջույթների ախտահարումներ), որոնք հաճախակի են հանդիպում Հայաստանում: Ուշադիր ընթերցելով այս բաժնում ներկայացված որոշ հիվանդությունների նկարագրությունը՝ ինքներդ կկարողանաք իրականացնել դրանց ախտորոշումը և առաջին բուժօգնությունը: